ՈՒՍՄԱՐԻ 2024-2025 / ANNÉE UNIVERSITAIRE 2024-2025
Փորձնական քննություններ/ Examens blancs
2-րդ կիսամյակ / 2eme semestre

## ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ/SCIENCES SOCIALES

Քննության տևողությունը՝ 2.5 ժամ / Durée d'examen: 2.5 heures

*Ընտրել ճիշտ տարբերակը կամ պատասխանը:*
*Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը գնահատվում է 1 միավոր:*
*Սխալ պատասխանի, պատասխանի բացակայության, ինչպես նաև մեկից ավելի պատասխաններ նշելու դեպքում՝ 0 միավոր:*

| | | |
|---|---|---|
| 1. | Օրենքներն օժտված են. | ա/ բարձրագույն իրավաբանական ուժով<br>բ/ կարգավորում են հասարակական հարաբերությունները<br>գ/ սահմանում են վարքագծի համապարտադիր կանոններ<br>դ/ ընդունվում է Ազգային ժողովի կողմից |
| 2. | Անձի կողմից հանրորեն վտանգավոր արարքի նախատեսումը և կատարումը. | ա/ դիտավորություն է<br>բ/ անզգուշություն է<br>գ/ ինքնավստահություն է<br>դ/ անտարբերություն է |
| 3. | Ինչպիսի՞ն է դատական համակարգի աստիճանակությունը Հայաստանում: | ա/ վճռաբեկ-վերաքննիչ-առաջին ատյանի դատարան<br>բ/ առաջին ատյանի-վերաքննիչ-վճռաբեկ դատարան<br>գ/ վերաքննիչ-վճռաբեկ-առաջին ատյանի դատարան<br>դ/ սահմանադրական-վճռաբեկ-առաջին ատյանի դատարան |
| 4. | Քրեական գործով վերաքննիչ դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել այդ ակտի հրապարակման պահից. | ա/ մեկամսյա ժամկետում<br>բ/ տասնհինգօրյա ժամկետում<br>գ/ երեսունօրյա ժամկետում<br>դ/ հինգօրյա ժամկետում |
| 5. | Ի՞նչ է պայմանագիրն ըստ էության. | ա/ հակասություն<br>բ/ հարաբերություն<br>գ/ համաձայնություն<br>դ/ հաշվենկատություն |
| 6. | Հոգեկան խանգարման հետևանքով անգործունակ ճանաչված քաղաքացու կնքած գործարքը. | ա/ անվավեր է<br>բ/ վիճահարույց է<br>գ/ առոչինչ է<br>դ/ շինծու է |
| 7. | ՀՀ ոստիկանությունը. | ա/ գործադիր իշխանության համակարգի պետական կառավարման մարմին չէ<br>բ/ ապակենտրոնացված համակարգի մարմին է<br>գ/ գործադիր իշխանության համակարգի պետական |

| | | |
|---|---|---|
| | | կառավարման մարմին է<br>դ/ նախագահին կից պետական կառավարման մարմին է |
| 8. | Ամուսնությունը դադարում է. | ա /ամուսնալուծության միջոցով<br>բ/ դատարանի միջոցով<br>գ/ ամուսինների համաձայնության միջոցով<br>դ/ երեխաներ չունենալու միջոցով |
| 9. | ՀՀ-ում ամուսնությունը. | ա/ մենամուսնական միություն է<br>բ/ բազմամուսնական միություն է<br>գ/ հարկադրական միություն է<br>դ/ միություն չէ |
| 10. | Ո՞ր տեսության համաձայն՝ սոցիալիզմին պետք է փոխարինի կոմունիզմը. | ա/ լիբերալիզմ<br>բ/ մարքսիզմ<br>գ/ կոնսերվատիզմ<br>դ/ նացիոնալիզմ |
| 11. | Աշխատողը. | ա/ օրենքով սահմանված տարիքի հասած կին է<br>բ/ օրենքով սահմանված տարիքի հասած տղամարդ է<br>գ/ օրենքով սահմանված տարիքի հասած քաղաքացի է<br>դ/ օրենքով սահմանված տարիքի հասած գործունակ քաղաքացի է |
| 12. | Նոտարական ձևը չպահպանելը. | ա/ հանգեցնում է գործարքի կնքմանը<br>բ/ հանգեցնում է գործարքի կայացմանը<br>գ/ հանգեցնում է գործարքի վերացմանը<br>դ/ հանգեցնում է գործարքի առոչնչությանը |
| 13. | Կախված ծագման հիմքերից պարտավորությունները լինում են. | ա/ համաձայնեցված և պայմանագրային<br>բ/ հանձնարարված և պայմանագրային<br>գ/ կամավոր և ոչ կամավոր<br>դ/ պայմանագրային և արտապայմանագրային |
| 14. | Նախավճարի մասին համաձայնությունը կնքվում է. | ա/ գրավոր և բանավոր<br>բ/ բանավոր<br>գ/ գրավոր<br>դ/ ճիշտ պատասխանը բացակայում է |
| 15. | Որտե՞ղ է ընդունվել «Մարդու իրավունքների և հիմնական ազատու-թյունների պաշտպանության մասին» եվրոպական համաձայնագիրը: | ա/ Հաագայում<br>բ/ Հռոմում<br>գ/ Ստրասբուրգում<br>դ/ Փարիզում |
| 16. | Մարդու իրավունքների եվրոպական Եվրադատարանի դատավորի լիազորությունները դադարում են. | ա/ 65 տարեկանում<br>բ/ 60 տարեկանում<br>գ/ 70 տարեկանում<br>դ/ անժամկետ են |
| 17. | Սաարի մարզը վիճելի տարածք էր. | ա/ Գերմանիայի և լեհաստանի միջև<br>բ/ Գերմանիայի և ֆրանսիայի միջև |

| | | |
|---|---|---|
| | | գ/ Ֆրանսիայի և Լեհաստանի միջև<br>դ/ Ֆրանսիայի և Անգլիայի միջև |
| 18. | Պետությունը. | ա/ տարածք է<br>բ/ քաղաքական կազմակերպություն է<br>գ/ հանրային իշխանություն է<br>դ/ պատասխաններից մեկը ճիշտ չէ |
| 19. | Նախնադարյան իշխանությունը. | ա/ առանձնացված էր<br>բ/ անմիջական էր<br>գ/ հանրային էր<br>դ/ բոլոր պատասխանները ճիշտ են |
| 20. | Նշվածներից ո՞րն է հանրապետության տեսակ: | ա/ վաղ ավատական<br>բ/ դուալիստական<br>գ/ սոցիալիստական<br>դ/ դասային ներկայացուցչական |
| 21. | Անվավեր գործարքի հատուկ տեսակներն են | ա/ առոչինչ և վիճահարույց գործարքները<br>բ/ կամային և ոչ կամային գործարքները<br>գ/ վավեր և անվավեր գործարքները<br>դ/ կեղծ և շինծու գործարքները |
| 22. | Ազատականության ակունքներին մոտ կանգնած չէ. | ա/ Կ.Մարքսը<br>բ/ Ի.Կանտը<br>գ/ Ջ.Լոքը<br>դ/ Թ.Ջեֆերսոնը |
| 23. | Ե՞րբ Եվրոպայում զարգացվեց սոցիալական պետություն տեսությունը: | ա/ քսաներորդ դարի 50-ական թթ.<br>բ/ քսաներորդ դարի 60-ական թթ.<br>գ/ տասնութերորդ դարի սկզբին<br>դ/ տասնութերորդ դարի վերջին |
| 24. | Ազգայնամոլություն կամ. | ա/ շովինիզմ<br>բ/ կոնսերվատիզմ<br>գ/ մարքսիզմ<br>դ/ նացոնալիզմ |
| 25. | Պարտավորության կողմերն են | ա/ պարտատերը և հայցվորը<br>բ/ պարտապանը և պարտավորը<br>գ/ պարտատերը և պարտապանը<br>դ/ հայցվորը և իրավազորը |
| 26. | Ո՞ր մարմինն է կատարում ամուսնության գրանցումը ՀՀ–ում. | ա/ նոտարիատը<br>բ/ դատարանը<br>գ/ քաղաքացիական կացության ակտերի գրանցում իրականացնող մարմինը.<br>դ/ իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմինը. |
| 27. | Ժառանգատու կարող է լինել. | ա/ իրավաբանական անձը<br>բ/ ֆիզիկական անձը<br>գ/ հասարակական կազմակերպությունը |

| | | |
|---|---|---|
| | | դ/ քաղաքական կազմակերպությունը |
| 28. | Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին համաձայնագիրը սկսել է գործել. | ա/ 1950թ–ից<br>բ/ 1987թ–ից<br>գ/ 1996թ–ից<br>դ/ 1959թ–ից |
| 29. | Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը առաջին հերթին լուծում է. | ա/ դիմումների ընդունման հարցը<br>բ/ նիստերի անցկացման հարցը<br>գ/ դատավորների հարցը<br>դ/ պաշտոնական ձևաթղթի հարցը |
| 30. | Միասեռ հասարակական հարաբերությունների որոշակի կողմը կարգավորում է. | ա/ իրավունքի մեթոդը<br>բ/ իրավունքի ինստիտուտը<br>գ/ իրավունքի նորմը<br>դ/ իրավունքի ճյուղը |
| 31. | Գիտական հայտնագործություն կատարելը. | ա/ անհրաժեշտ իրավաչափ վարքագիծ է<br>բ/ թույլատրելի իրավաչափ վարքագիծ է<br>գ/ ցանկալի իրավաչափ վարքագիծ է<br>դ/ պարտադիր իրավաչափ վարքագիծ է |
| 32. | Վճռաբեկ դատարանի նպատակն է. | ա/ օրենքի կատարելագործումը<br>բ/ օրենքի միատեսակ կիրառումը<br>գ/ օրենքի պաշտպանությունը<br>դ/ օրենքների կարգավորվածությունը |
| 33. | ՀՀ փաստաբանական պալատն ունի. | ա/ հանրային պաշտպանի գրասենյակ<br>բ/ կանանց պաշտպանի գրասենյակ<br>գ/ հասարակական պաշտպանի գրասենյակ<br>դ/ քաղաքական պաշտպանի գրասենյակ |
| 34. | Իրավախախտումը. | ա/ վարքագիծ չէ<br>բ/ վարքագիծ է<br>գ/ արարք է<br>դ/ ճիշտ են բ և գ պատասխանները |
| 35. | ՀՀ սահմանադրությունն ընդունվել է. | ա/ նախագահի հրամանագրով<br>բ/ հանրաքվեի միջոցով<br>գ/ ազգային ժողովի կողմից<br>դ/ ճիշտ պատասխանը բացակայում է |
| 36. | Քանի՞ ընթերցում է անցնում օրենքի նախագծի քննարկումը ՀՀ Ազգային ժողովում. | ա/ առնվազը երկու<br>բ/ առնվազը երեք<br>գ/ առավելագույնը երկու<br>դ/ առավելագույնը երեք |
| 37. | Պետության կուսակցությունների գործունեությունը հետազոտող գիտությունը կոչվում է. | ա/ տնտեսագիտություն<br>բ/ փիլիսոփայություն<br>գ/ քաղաքագիտություն<br>դ/ սոցիալական գիտություն |
| 38. | Քաղաքացիական հասարակությունը. | ա/ ազատ անհատների միավորում է<br>բ/ ազատական միավորում է |

| | | |
|---|---|---|
| | | գ/ պահպանողական անհատների միավորում է<br>դ/ ազատական անհատների միավորում է |
| 39. | Ինքնիշխանություն բառացի նշանակում է. | ա/ գերագույն իշխանություն<br>բ/ սոցիալական իշխանություն<br>գ/ տնտեսական իշխանություն<br>դ/ ճիշտ պատասխանը բացակայում է |
| 40. | Մարդու իրավունքների երկրորդ սերունդը եկավ լուծելու. | ա/ հավասարության խնդիրը<br>բ/ համերաշխության խնդիրը<br>գ/ եղբայրության խնդիրը<br>դ/ սոցիալական խնդիրը |
| 41. | Բարոյական նորմերը հենվում են. | ա/ հարգանքի ուժի վրա<br>բ/ ուժի հեղինակության վրա<br>գ/ հեղինակության ուժի վրա<br>դ/ պետական հարկադրանքի վրա |
| 42. | Միջազգային իրավական պատասխանատվությունը լինում է. | ա/ նյութական և հոգևոր<br>բ/ արտաքին և ներքին<br>գ/ քաղաքական և ոչ քաղաքական<br>դ/ քաղաքական և նյութական |
| 43. | «Ժողովրդական կապիտալիզմի պետություն»տեսությունը մշակել է. | ա/ Ջ. Լոքը<br>բ/ Մարկո Պոլոն<br>գ/ Ջ.Հելբրեյտը<br>դ/ Ֆ.Ռատցելը |
| 44. | Բարոյագիտության առաքինությունների տեսության հեղինակն է. | ա/ Ի. Կանտը<br>բ/ Պ.Հոլբախը<br>գ/ Արիստոտելը<br>դ/ Դ. Դիդրոն |
| 45. | Փաստաբանական համակարգը. | ա/ կառավարական հատուկ կազմակերպություն է<br>բ/ ոչ կառավարական հատուկ կազմակերպություն է<br>գ/ հանրային մարմին է<br>դ/ տեղական ինքնակառավարման մարմին է |
| 46. | Հայկական առաջին ավանդական կուսակցություն է. | ա/ սոցիալ դեմոկրատական հնչակյանը<br>բ/ դաշնակցությունը<br>գ/ արմենականը<br>դ/ ռամկավար ազատականը |
| 47. | Գործադուլ անելու իրավունք ունեն. | ա/ ուսուցիչները<br>բ/ բժիշկները<br>գ/ անհետաձգելի բժշկական օգնության ծառայողները<br>դ/ զինված ուժերում ծառայողները |
| 48. | Քաղաքական համակարգի գործունեությունը չի կարգավորվում. | ա/ իրավական նորմերով<br>բ/ քաղաքական նորմերով<br>գ/ քաղաքացիական նորմերով<br>դ/ բարոյական նորմերով |
| 49. | Դատավորները ենթարկվում են. | ա/ Ազգային ժողովին |

| | | |
|---|---|---|
| | | բ/ կառավարությանը<br>գ/ գլխավոր դատախազին<br>դ/ օրենքին |
| 50. | Պարտավորության կատարման լրացուցիչ եղանակ չէ. | ա/ հաշվանցումը<br>բ/ գրավը<br>գ/ երաշխիքը<br>դ/ նախավճարը |
| 51. | Օրենքների ոչ պաշտոնական մեկնաբանությունը կրում է. | ա/ ցուցադրական բնույթ<br>բ/ խորհրդատվական բնույթ<br>գ/ հետազոտական բնույթ<br>դ/ որոնողական բնույթ |
| 52. | Վատիկանը դիվանագիտական կապեր ունի. | ա/ ավելի քան 80 երկրների հետ<br>բ/ ավելի քան 60 երկրների հետ<br>գ/ ավելի քան 50 երկրների հետ<br>դ/ ճիշտ պատասխանը բացակայում է |
| 53. | Աշխարհիկացում կամ. | ա/ ֆրակցիա<br>բ/ սեկուլյարիզացիա<br>գ/ սատիսֆակցիա<br>դ/ սպեկուլյացիա |
| 54. | Արդի պետության կառույցակարգի սկզբունքներից չէ. | ա/ ժողովրդաիշխանությունը<br>բ/ հիմնավորվածությունը<br>գ/ օրինականությունը<br>դ/ արհեստավարժությունը |
| 55. | Եվրոպական միության անդամ պետություն չէ. | ա/ Ֆրանսիան<br>բ/ Իտալիան<br>գ/ Կիպրոսը<br>դ/ Սերբիան |
| 56. | Օրենքների պաշտոնական մեկնաբանությունը ունի. | ա/ բարոյական հեևանքներ<br>բ/ քաղաքական հետևանքներ<br>գ/ օրենքական հետևանքներ<br>դ/ իրավական հետևանքներ |
| 57. | 2013 թվականին Եվրոմիությանն անդամակցել է. | ա/ Կիպրոսը<br>բ/ Խորվաթիան<br>գ/ Էստոնիան<br>դ/ Դանիան |
| 58. | Կառավարման միահեծանական ձև ուներ. | ա/ Արշակունյաց թագավորությունը<br>բ/ Բագրատունիների թագավորությունը<br>գ/ Վանի թագավորությունը<br>դ/ Ռուբինյանների թագավորությունը |
| 59. | Ազգայնականություն կամ. | ա/ ֆաշիզմ<br>բ/ լիբերալիզմ<br>գ/ շովինիզմ<br>դ/ նացիոնալիզ |

| | | |
|---|---|---|
| 60. | ԱՄՆ անկախության հռչակագիրն ընդունվել է. | ա/ 1787 թվականին<br>բ/ 1689 թվականին<br>գ/ 1776 թվականին<br>դ/ 1792 թվականին |
| ***Ընտրել ճիշտ տարբերակը կամ պատասխանը:<br>Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը՝ 2 միավոր: Սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում՝ 0 միավոր:*** | | |
| 61. | Եթե կտակարարը ժառանգությունից զրկել է պարտադիր բաժնի իրավունք ունեցող անձին, ապա՝ | ա/ կտակը համապատասխան մասով անվավեր է<br>բ/ կտակը համապատասխան մասով վիճահարույց է<br>գ/ կտակը համապատասխան մասով առոչինչ է<br>դ/ կտակը իրավական ուժ չունի |
| 62. | Ներկայացված տարբերակներից ո՞րն է սխալ. | ա/ աշխատանքային կարգապահության յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ<br>բ/ կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնվեն աշխատողի իրավաբանական անձի կարգավիճակ ունենալու կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված լինելու հանգամանքը<br>գ/ կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնվեն աշխատողի՝ նախկինում կատարած աշխատանքը<br>դ/ կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնվեն խախտման ծանրությունը և դրա հետևանքները, աշխատողի մեղքը, այդ խախտման կատարման հանգամանքները |
| 63. | Նշված տարբերակներից ո՞րն է ճիշտ | ա/ մարդու իրավունքների առաջին սերունդը եկավ լուծելու մարդու անձնական և քաղաքական ազատության խնդիրը<br>բ/ մարդու իրավունքների երկրորդ սերունդը եկավ լուծելու հավասարության և համերաշխության խնդիրը<br>գ/ մարդու իրավունքների երրորդ սերունդը առաջ մղեց եղբայրության և ազատության գաղափարը<br>դ/ մարդու իրավունքների չորրորդ սերունդը առաջ մղեց եղբայրության գաղափարը |
| 64. | Գործարքը/պայմանագիրը գրավոր կերպով ձևակերպող ցանկացած փաստաթղթի պարտադիր հատկանիշ է. | ա/ գործարքը հաստատող անձի (անձանց) ստորագրությունները<br>բ/ գործարքը կնքող անձի (անձանց) ստորագրությունները<br>գ/ գործարքը հաստատող իրավաբանական անձի կնիքի առկայությունը<br>դ/ նոտարի կողմից ստորագրության վավերացումը |

| | | |
|---|---|---|
| 65. | Նշվածներից ո՞րը միջազգային իրավունքի սկզբունք չէ. | ա/ ինքնիշխան հավասարության սկզբունքը<br>բ/ պետությունների ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը<br>գ/ տարածքային ամբողջականության սկզբունքը<br>դ/ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքը |
| 66. | Նշված տարբերակներից ո՞րն է ճիշտ. | ա/ Ֆրանսիացի Ժան Բոդենն իր «Պատմության աշխարհագրական առանցքը» գրքում բացատրում է բնակչության, պետության, նրա քաղաքականության և բնական միջավայրի միջև կապը<br>բ/ «Օրենքներ ոգու մասին» աշխատությունը և «Աստրախանի հայերի դատաստանագիրքը» թվագրվում են նույն թվականին՝ 1748:<br>գ/ Ալֆրեդ Մեխենը առավելություն է տալիս պետության ծովային դիրքին:<br>դ/ Մեծ տարածքների գաղափարի հեղինակը Հելֆորդ Մաքինդերն է: |
| 67. | «Պետական կառավարման մասին տրակտատում» Ջոն Լոքի ներկայացրած՝ անձի երեք հիմնական բնածին իրավունքներն են. | ա/ կյանքի, խաղաղության և մարդասիրության իրավունքները<br>բ/ Կյանքի, ազատության և համերաշխության իրավունքները<br>գ/ Կյանքի, ազատության և արդարության իրավունքները<br>դ/ Կյանքի, ազատության և սեփականության իրավունքները |
| 68. | Ներկայացված տարբերակներից որն է սխալ:<br>Ոչ իրավական օրենքի դեմ պայքարի երաշխիք է՝ | ա/ ժողովրդաիշխանության սկզբունքը<br>բ/ սահմանադրական և ընդհանուր դատական վերահսկողությունը<br>գ/ իրավաստեղծ գործունեության բարդ և ձևականացված բնույթը<br>դ/ հասարակության մեջ ուժային պետական կառույցների քաղաքական և իրավական կարգավիճակը |
| 69. | Նշվածներից ո՞ր տարբերակում է միջազգային իրավական քաղաքական պատասխանատվության ձևը համապատասխանում օրինակին: | ա/ ռեպրեսալիա (օրինակ՝ իրավախախտ պետությունից ապրանքների ներկրման արգելք՝ (էմբարգո))<br>բ/ ռետորսիա (օրինակ՝ ջրի որակի և մաքրության վերականգնում, որ կեղտոտվել էր իր մեղքով)<br>գ/ ռեստորացիա (օրինակ՝ պաշտոնական ներողություն խնդրելը)<br>դ/ սատիսֆակցիա (օրինակ՝ մաքսային տուրքերի |

| | | |
|---|---|---|
| | | բարձրացումն այդ պետության ապրանքների համար) |
| 70. | Նշված տարբերակներից ո՞րն է սխալ:<br>Ո՞ւմ է պատկանում այն տեսակետը, ըստ որի. | ա/բարոյական արարքները պետք է գնահատվեն ըստ իրենց բերած օգուտի/ Ջերեմի Բենտամ<br>բ/ բարին ավելի դուրեկան և գովելի է դառնում, եթե հնարավոր է լինում համեմատել չարի հետ/ Օգոստինոս Երանելի<br>գ/ ամոթն արգելում է այն, ինչն արգելված չէ օրենքով/ Դեմոկրիտ<br>դ/Ամենաերջանիկ մարդը նա է, ով երջանկություն է պարգևում մեծ թվով մարդկաց/ Դենի Դիդրո |
| **Չորս բաղադրիչով հարց-առաջադրանքներ**<br>***Գտնել ճիշտ կապերն ու համապատասխանությունները աջ և ձախ սյունակներում տրված հասկացությունների, երևույթների միջև:***<br>***Պատասխանները գրանցել առաջադրանքից հետո զետեղված աղյուսակում՝ համապատասխան թվի տակ նշելով ճիշտ պատասխանի տառը:***<br>*Պատասխանի ներկայացման այլ տարբերակները չեն գնահատվելու:*<br>*Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր, առաջադրանքի ամբողջական ճիշտ պատասխանը՝ չորս միավոր:* | | |

**71. Համապատասխանեցնել գաղափարը հեղինակին.**

| | |
|---|---|
| 1. Կ. Հաուսհոֆեր | ա/ «5 ծովերով եզրավորված ցամաքի» գաղափար |
| 2. Զ. Բժեզինսկի | բ/ «Պոսիբիլիզմի» հայեցակարգ |
| 3. Ա. Մեխեն | գ/ «Մեծ տարածքների» գաղափար |
| 4. Պոլ Վիդալ Բլաշ | դ/ «Ծովային ուժի հայեցակարգ» |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | | |

**72. Համապատասխանեցնել մարդու՝ բարի կամ չար լինելու վերաբերյալ պատկերացումները հեղինակ-փիլիսոփաներին.**

| | |
|---|---|
| 1.Ժան–Ժակ Ռուսո | ա/ «Որքան մարդը բարի է, այնքան ավելի շատ է ուրիշների մեջ բարություն տեսնում»: |
| 2.Բլեզ Պասկալ | բ/ «Մարդը չար էակ է» |
| 3.Ֆրիդրիխ Նիցշե | գ/ «Մարդը հակված է չարիք գործելու: Բայց մարդու մեջ կան նաև բարու հատիկներ» |
| 4. Իմանուիլ Կանտ | դ/ «Մարդն ի բնե բարի է: Նրան չար է դարձնում հասարակությունը»: |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | | |

**73. Համապատասխանեցնել տարեթիվը փաստաթղթին.**

| | |
|---|---|
| 1.1776թ. | ա/ Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիր |
| 2.1789 թ. | բ/ Անգլիայի խորհրդարանի օրենք հպատակների իրավունքների մասին |
| 3.1689թ. | գ/ ԱՄՆ անկախության հռչակագիր |
| 4. 1787 թ. | դ/ ԱՄՆ սահմանադրություն |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | | |

**74. Համապատասխանեցնել հատկանիշները հասկացություններին.**

| | |
|---|---|
| 1. Պետական տարածք | ա/ իրավահավասարություն |
| 2. Պետական իշխանություն | բ/ անձեռնմխելիություն |
| 3. Ներքին ինքնիշխանություն | գ/ լեգիտիմություն |
| 4. Արտաքին ինքնիշխանություն | դ/ իշխանության գերակայություն |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | | |

**75. Համապատասխանեցնել գաղափարաքաղաքական հոսանքը դրա գաղափարին.**

| | |
|---|---|
| 1. Պահպանողականություն | ա/ «պրոլոտարիատի դիկտատուրայի մերժում» |
| 2. Ազգայնականություն | բ/ «դանդաղ, աստիճանական փոփոխություններ» |
| 3. Ժողովրդավարական սոցիալիզմ | գ/ «էթնոսի շահերը ներկայացնող ուղղություն» |
| 4. Ռասիզմ | դ/ «մարդաբանական հատկանիշների առաջ մղում» |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | | |